ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«25» հունվարի 2021թ. N ԱՊ/28-2021

ք. Արմավիր

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ի N 151 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N 1066-Ն որոշման պահանջներով,

Որոշում եմ՝

1. Ստեղծել գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի փոփոխման հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2009 թվականի նոյեմբերի 12-ի «Հանձնաժողով ստեղծելու մասին» N 151 կարգադրությունը:
3. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել համապատասխան համայնքների ղեկավարներին և աշխատակազմի քարտուղարներին /համաձայնությամբ/ :
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Մարզպետ՝ ***Հ.Մաթևոսյան***

Недействительная подпись

VERIFIED OCSP 25.01.2021 10:53:22 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230